Հետևաբար՝ նման պայմաններում Կարեն Անտոնյանի լիազորությունը հավաստող փաստաթղթի /լիազորագրի/ բացակայության պայմաններում նրա կողմից ներկայացված հայցադիմումի պատասխանը Դատարանը համարել է չներկայացված՝ հետևաբար պատասխանին կից ներկայացված միջնորդությունը նույնպես չի քննարկվել:

Ըստ այդմ՝ 02.08.2024թ. հայցադիմումի պատասխանում վկայակոչված, այնուհետև նույն անձի կողմից 05.08.2024թ. ներկայացված փաստաթղթերը Դատարանի կողմից նույնպես համարվել են չներկայացված և չեն հետազոտվել:

Ամփոփելով վերոգրյալները՝ Դատարանը գտնում է, որ հայցվորի հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

Հայցի ապահովման միջոցի պահպանման հարցի լուծում.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտով լուծվում են նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման և հայցի ապահովման միջոցների վերացման հարցերը:

Տվյալ դեպքում Դատարանը գտնում է, որ 13.06.2024թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պետք է պահպանել մինչև սույն վճռի օրինական ուժի մեջ մտնելը, այնուհետ՝ վերացնել:

Դատական ծախսերի բաշխման հարցի լուծում.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն....:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտով լուծվում են նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման և հայցի ապահովման միջոցների վերացման հարցերը:

Հաշվի առնելով, որ հայցվորը նախապես վճարել է անհրաժեշտ պետական տուրքի գումարը, իսկ հայցը պահանջի 1-ին մասով կարճվում է՝ պահանջից հրաժարվելու հիմքով, իսկ 2-րդ պահանջի մասով մերժվում է, ուստի Դատարանը գտնում է, որ Դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«ՍՈՒՐԳԵՎ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի միջև 28.11.2020թ.-ին կնքված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/26-1 ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից միակողմանի լուծելու մասին 22.05.2024թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, կարճել՝ պահանջից հրաժարվելու հիմքով:

«ՍՈՒՐԳԵՎ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Անտոնյանի 03.06.2024թ-ի

որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Դատարանի 13.06.2024թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև սույն վճռի օրինական ուժի մեջ մտնելը, այնուհետև վերացնել:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am